

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԳՐԱՐԱՐԻ ՈՐՈՇ ԲԱՌԵՐԻ ՀՈՂՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գ. Կ. ԲԱՂԴԻՇՅԱՆ

Հայ լեզվաբանությունը մեծ ու շնորհակալ վաստակ ունի գրարարի հոլովման ուսումնասիրման գործում: Այնուհանդերձ, այն այժմ ընթանում է նաև ստուգումների ուղիով և այսօր էլ շարունակվում են առանձին հարցերի ճշգրտման աշխատանքները: Նորանոր փաստերի առաջ գալը անհրաժեշտ է դարձնում եղած ուսումնասիրությունների արդյունքների վերանայումը: Ստորև ներկայացնում ենք մեր մի քանի նկատառումները գրարարի թեքվող որոշ բառերի հոլովման կապակցությամբ: Հասկանալի է, որ գրարարի հոլովման պատմական դարգացման պատկերն ափսոսաբար չի ծախսում ու հստակ տեսնելու և նկարագրելու նպատակով ամենից առաջ պետք է պարզել լեզվական համեմատությունների համար ելման եզրի ժամանակային սահմանը: Հայտնի է, որ դեռևս 1830-ական թթ. վիեննայի միսիթարյաններ Հ. Գաթրեյանի, Մ. Գարագաշյանի, Դ. Հովնանյանի և այլոց կողմից գրարարը բաժանվեց դասական և ետդասական շրջանների: Դասական գրարարի շրջանը նրանց կողմից հասցվեց մինչև 460 թ., իսկ 461 թ. հետո եղած ողջ գրարարը համարվեց ետդասական:

Պրոֆ. Վ. Առաքելյանը 1976-ին գրած մի հոդվածում դասական գրարարի շրջանը համարում է V դարն ամբողջությամբ¹:

Մենք հետևում ենք այս մոտեցմանը, համեմատության առաջին՝ ելման եզրը, սակայն, անվանելով ոչ թե դասական գրարար, այլ պարզապես V դարի գրարար:

Դասական ու ետդասական գրարարի ժամանակային սահմանագծի հարցի լուծման համար (որը սկզբունքային նշանակություն ունի) միայն բառի և բառակապակցության վրա հենվելը (ինչպես վարվել են մինչև այժմ) կարող է լինել հնարավոր միջոցներից, ուղիներից մեկը և, հենց այս առնչությամբ էլ՝ թերև՜ Հիշյալ կարևոր խնդրի փոխական լուծման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն որոշ բառերի ու բառակապակցությունների համեմատությանը (այն է՝ լեզվի մի շրջանում այսինչ բառի, բառակապակցության փոխարեն գործածվում կամ ավելի շատ է գործածվում այսինչ բառը կամ բառակապակցությունը, ոճը), այլ պետք է բաղդատել հայերենի պատմական զարգացման տարբեր շրջանների լեզվական ողջ համակարգը՝ հնչյունական, բառական, ձևաբանական ու շարահյուսական մակարդակներով՝ ըստանալով նաև ուղեկցող հանգամանքի հաշվառումը:

V դարի մատենագրության լեզուն ամբողջությամբ վերցնելը մեզ համար համոզիչ է և տրամաբանական: Ինչ վերաբերում է ետդասական գրարարին, ապա այն V դարից հետո այլևս խոսակցական լեզու չէր: Երկրորդ՝ պետք է ասել, որ դեռևս XIX դարի 50-ական թթ. մինչև մեր օրերը տարբեր հետազոտողների կողմից տարբեր փորձեր են արվել ընդհանրապես հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման առումով (գիտական տեսակետից մեզ համար ընդունելին Գ. Ջահուկյանի շրջանաբաժանումն է): Գ. Ջահուկյանը, օրինակ, հայոց գրավոր լեզվի հին շրջանը (ասել է թե՛ գրարարը) բաժանում է երեք ենթաշրջանի՝ ա) «Դասական գրաբարի Լեռնաշեն (V դար, հատկապես V դարի կեսերը....)», բ) «Ետդասական գրաբարի Ենթաշեն (VI—VII դդ.)....», գ) «Ետդասական գրաբարի Ենթաշեն (VIII—IX դդ.)....»: Այս շրջանին հաջորդում են միջին և նոր շրջաններն իրենց ենթաշրջաններով²:

¹ Տե՛ս նաև Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 77:

² Վ. Գ. Առաքելյան. Դասական և հետդասական գրարարը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 255—272: Նույնի՝ Դասական կամ ոսկեդարյան հայերենի խնդիրը.— Վ. Գ. Առաքելյան. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության. Երևան, 1981, էջ 91—106:

³ Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը. Երևան, 1969, էջ 36, 42—68:

Գ. Զահուկյանի, մյուս հեղինակների երկերում հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման միջին և նոր շրջաններում ալլուս խոսք չկա (իհարկե, իբրև շրջանաբաժանման) գրաբարի մասին: Սա ճիշտ է և բնական հայոց գրավոր լեզվի պատմական զարգացման գիտական շրջանաբաժանման հայեցակետից: Սակայն քանի որ մեր խոսքն այստեղ մասնավորապես գրաբարի մասին է, ուստի, հայտնի է, որ գրաբարով գործեր են գրվել մեր լեզվի և՛ հին, և՛ միջին, և՛ նոր շրջաններում (անկախ դրանց լեզվական որակի տարբերություններից⁴): Հետևաբար, ետղսական գրաբարի ինքն իր մեջ քննելու և լեզվի պատմական զարգացման տարրեր փոփոխում նրա կրած փոփոխությունները տեսնելու և համեմատելու համար այն բաժանում ենք երեք մեծ շրջանների՝ հիմք ընդունելով լեզվի պատմական զարգացման տեսակետից հայագիտության մեջ այժմ ընդունված երեք մեծ շրջանները՝ 1) հին հայերենի կամ գրաբարի շրջանի (VI—XI դդ.), 2) միջին գրական հայերենի շրջանի (XII—XVI դդ.),⁵ 3) նոր կամ աշխարհաբարացման շրջանի (XVII—XIX դդ.) ետղսական գրաբար: Այս շրջաններից յուրաքանչյուրի դրական, խոսակցական-բարբառային լեզուն, առավել կամ նվազ չափով, ազդում է գրաբարի վրա, փոփոխության ենթարկում այն: Ավելի ճիշտ, քանի որ գրաբարը թեկուզև պայմանականորեն մեկուս, սովորելով ձևեր բերվող լեզուն էր, նշված տարբեր շրջանների մատենագիրները գրաբար շարադրելիս, կամայ թե ակամայ, շատ հաճախ բազարկում են այն իրենց ապրած օրերի ինչպես գրական, այնպես էլ խոսակցական-բարբառային լեզվին բնորոշ տարրերով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, VI—VII դդ. ետղսական գրաբարը (այն, ինչը Գ. Զահուկյանն անվանում է «ետղսական գրաբարի ենթաշրջան») շատ կոդմերով ավելի մոտ է կանգնած V դարի գրաբարին: Ահա թե ինչու այդ դարերը մենք կոչում ենք վաղ ետղսական գրաբարի շրջան, իսկ VIII—XI դդ. գրաբարը՝ նախամիջին շրջանի ետղսական գրաբար՝ հետևելով Գ. Զահուկյանին:

Թեև շրջանաբաժանումների մեջ քիչ թե շատ պայմանականություն կա, բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում կան ժամանակահատվածներ, երբ մատենագիրների լեզուն միմյանցից առավելապես տարբերվում է անհատական-հոգեբանական և նորաբանությունների առումով, քան լեզվական համակարգի տեսակետից՝ դարից դար անցումներով: Այսպիսի դեպքում, ասես, գործ ունենք լեզվական յուրատեսակ ստանդարտացման շրջանի հետ: Այդպիսին է, օրինակ, վիճակը միջին գրական հայերենի և նոր կամ աշխարհաբարացման շրջանների ետղսական գրաբարում: Դրանք (տարբեր շրջանների առումով) ինչ-որ չափով, անշուշտ, տարբերվում են միմյանցից, բայց յուրաքանչյուրն ինքն իր մեջ՝ գրեթե ոչ: Այս է պատճառը, որ վերջին երկու շրջանների համար ենթաշրջաններ չենք առանձնացնում:

Ողջ ետղսական գրաբարն այդպիսի շրջանների և ենթաշրջանների բաժանելով՝ ժամանակային այդ կտրվածքների լեզվական փաստերն ինչպես միմյանց, այնպես էլ V դարի գրաբարի հետ համեմատելով՝ ավելի հստակ կներկայացվի գրաբարի հոլովման (և ոչ միայն հոլովման) պատմական զարգացման իրական ընթացքը, մի բան, որ խիստ կարևոր է նաև հայոց լեզվի պատմության գիտական շարադրման համար:

Համեմատության եղբերի և շրջանաբաժանման սխիմայի պարզման հետ միասին կարևոր է պարզաբանել նաև այն հարցը, թե (բացի գրաբար բնագրերից) ի՞նչ գործեր են կարևոր համարվել գրաբարի հոլովման ուսումնասիրման համար: Այս տեսակետից, օրինակ, Հ. Աճառյանը հարևորագույն գործեր է գիտում իր «Հայերեն արմատական բառարանը», ՆՁԲ-ն, ինչպես նաև Բ. Աստվածատուրյանի կողմից կազմված համաբարբառը՝ ՆՁԲ-ի վերաբերյալ, սակայն, անում է հետևյալ դիտողությունները՝ «Բառարանը (իմա՞ ՆՁԲ-ն—Գ. Բ.) յուրաքանչյուր բառի մոտ նշանակում է նաև նրա հոլովաձևը: Բայց այս ցուցմունքները միշտ վստահելի չեն: Վրստահելի են միայն այն ձևերը, որոնք վկայություններով էլ հաստատված են», «Երբ որևէ բառի հոլովումը ավանդված չէ մատենագրության մեջ, ուրեմն և հայտնի չէ, շատ անգամ ՆՁԲ-ն ինքն է հնարում սի ձև և դնում», «Ուրիշ անգամ ՆՁԲ տալիս է ճիշտ հոլովումը, դեռևս է վկայություններ այդ հոլովմամբ, բայց վկայությունները հետին են և հայտնի չի լինում, թե մենք ուզում

⁴ Նոր շրջանի համար հիշենք Մխիթարյան միաբանության մի շարք ներկայացուցիչների գրաբարալեզու ստեղծագործությունները:

⁵ Թ. Աստուածատուրեան. Համաբարբառ Հին և նոր կտակարանաց. Երուսաղեմ, 1895:

յան շրջանում հողովումը ինչպես էր՝ Այս նկատառումներին, որոնք ճիշտ են, ավելացնենք նաև՝ նշԲ-ն հաճախ պլանաբանական չէր ընդունվում, այս կամ այն հողովումը, հողովածներ, ըստ չափերի հողովումով թերված փոստ կա հենց տվյալ բաժնի հողովածում բերված օրինակ-նախադասությունների մեջ: Այսպես, նշԲ-ն (հ. 2, էջ 599) պարզ «հողերի հայր», «սպասարար», «կաթովիկ եկեղեցու հողերը պետ» բաժնի համար չի նշում արտաքին թերման և հողովում, բարան դիտարարի համար (ն. տ., հ. 1, էջ 399)՝ արտաքին թերման ու պարզ հողովում, ձիառար բաժնի համար (ն. տ., հ. 2, էջ 157)՝ արտաքին թերման ու հողովում և այլն, մինչդեռ այդ դիտարարի հողովածներում կան օրինակներ հենց այն հողովումների համար, որոնք հիշյալ դիտարարի դիմաց նշված չեն՝ «Սոփորություն էր առաջնորդացն սկիտայ լիանել առ պապայն ի տոն դատկին», «Լաբանով (կամ բարեով) փութիցին»՝ «Թագապորն Երուսաղեմի 3 ձիառարով (բոք)»:

ՆշԲ-ն այս կամ այն բաժնի դիմաց հաճախ նշում է, որ հողովում է և՛ ի, և՛ ի-ա կամ՝ և՛ ո, և՛ ո-ա խառն հողովմամբ, սակայն բնագրային օրինակներ է բերում մինչև եղակի բացառական հողովով թերված ձևերով, որով հնարավոր չէ ասել, թե բառը ո՞ր հողովմամբ է թերվել՝ պարզ, թե խառն:

Համարարարների և այլ աղբյուրների մանրագնին ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշակի ճշգրտումներ կատարել գրաբարի մի խումբ բառերի հողովման բնույթի մեջ: Այդ ճշգրտումներն առայժմ հանգում են հետևյալ հիմնական խմբերին՝

1. V դարի մասկավորությամբ ավանդված, բայց նկատագրողների կողմից նետնաբար համարված հողովումներ կամ հողովածներ.— Եթե հաշվի չառնենք Թ. Աստվածատուրյանի՝ մեր կողմից արդեն հիշված համարարարը, ուսումնասիրողները մինչև վերջերս չունեին տարբեր պարբերի գրաբարաչափ մատենագրության այլ համարարարներ, որոնք հույժ անհրաժեշտ են գրաբարի ուսումնասիրման համար: Չնայած սրան, ի պատիվ հայ լեզվաբանության անխոնջ մշակների, պետք է ասել, որ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ նրանց դիտողությունները մեծ մասամբ ճիշտ են: Նրանց նպատակից դուրս է եղել ամենայն մանրակրկիտությամբ վիճակագրություն կատարելը (մի բան, որ առանց համարարարների հնարավոր էլ չէ): Ահա թե ինչու նրանք մեծ մասամբ նշել են ընդհանուրը, ակնառուն, թեև երբեմն էլ նրանց աչքից չի վրիպել գրաբարում այս կամ այն բաժնի միայն մեկ անգամ գործածված հողովածն անգամ և արձանագրել են այն: Սակայն այսօր, երբ փաստերը ստույգելու նոր հնարավորություններ կան, անհրաժեշտ է որոշ ճշգրտումներ կատարել: Ըստ հնարավորին պետք է պարզել, թե ետդասական գրաբարի ո՞ր շրջանում է ի հայտ գալիս կամ անհետանում լեզվական այս կամ այն երեւոյթը, որպեսզի ժամանակագրական հաջորդականությամբ կարողանանք տեսնել, թե ո՞րն է հինը, ո՞րը՝ նորը և այլն: Այս տեսակետից ուշագրավ է, որ ուսումնասիրողների կողմից հաճախ նետնաբար դիտված հողովումը կամ հողովածը գտնում ենք նույնիսկ V դարի մատենագրության մեջ (տվյալ դեպքում մեզ համար կարևոր չէ, թե ի՞նչ հաճախականությամբ է հանդիպում): Օրինակ, նշԲ-ն (հ. 1, էջ 305), ԱԲ-ն (էջ 116) նշում են, որ առիժ բառը հողովում է արտաքին թերման ու կամ ու հողովմամբ (նշԲ-ն ու հողովման համար բնագրային նախադասություն չի բերում):

Հր. Աճառյանը (ԼԹ, հ. 3, էջ 462) առիժ գոյականի համար նշում է միայն ու հողովում, իսկ Արմ.-ում (հ. 1, էջ 259) հիմնական է համարում ու հողովումը, իսկ ու հողովմամբ թերվելը դիտում է հետին: Փաստերը ցույց են տալիս (տե՛ս աղյուսակ 1)⁶, որ առիժ գոյականը գրա-

⁶ Հ. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957, էջ 486—489:

⁷ Բառերի հողովման տիպը նշելու հարցում Հր. Աճառյանի Արմ.-ում և ԼԹ-ում հայտնված կարծիքները հաճախ չեն նույնանում և նույնիսկ իրարամերձ են: Առիժ գոյականի՝ ու հողովում թերվելը հետին է համարում նաև Գ. Զահուկյանը (տե՛ս Գ. Զահուկյան. Հին հայերենի հողովման սխառմը և նրա ծագումը. Երևան, 1959, էջ 312):

⁸ Հողովածում բերված վիճակագրությունները կատարել ենք ըստ համաբարբառների: Ասենք, որ ճշգրիտ վիճակագրություն անելը երբեմն պարզապես անհնար է: Եթե բառը հողովում է և՛ ի պարզ, և՛ ի-ա խառն հողովմամբ, բայց որևէ բնագրում գործածվել է միայն մինչև եղակի բացառական հողովը ներառյալ կամ այդպիսի բազմաթիվ փաստերի կողքին հանդիպում է եղակի գործիականի, հոգնակի հողովածների մի երկու փաստ, այդպիսի դեպքերում եզակիով թերված հողովածները ո՞ր հողովման պետք է հատկացնել՝ ի պարզի՞ն, թե՞ ի-ա խառն հողովմանը: Կողմնորոշվելու որևէ ելք չկա: Այդպիսի դեպքերում թերևս ավելի ճիշտ կլինի մինչև եղակի

բարում հոլովվում է գրեթե միայն արտաքին թեքման ու հոլովմամբ: Սակայն Փափստոս Բու-
յանգի լեզվում հանդիպում ենք արտաքին թեքման ու հոլովմամբ թեքված դեպքի՝ «էր ելեալ
եղևն ընդ թաթուլ բազկին առիւծոյն» (ՓԲՊԶ, էջ 185) 9:

Աղյուսակ 1

Աղբյուրներ	-ոյ	-ոց	-ու	-ուց
Աստվածաշունչ			15	16
Եղնիկ Կողբացի			3	
Ագաթանգեղոս				1
Փափստոս Բուղանդ	1		1	1
Մովսես Խորենացի			2	
Ղազար Փարպեցի			1	
Սեբեոս			5	
Ղևոնդ				1
Գրիգոր Նարեկացի				2
Հովհաննես Դրասխանակերտցի				1
Մխիթար Այրիվանեցի		1		
Մխիթար Անեցի			2	

Ընդհանրապես ետդասական գրաբարում հանդիպում են և՛ ու հոլովվող (իհարկե, սակավ),
և՛ ու հոլովվող թեքված փաստեր՝ «Կրկին արկալ Դանիէլ ի մէջ եօթն առիւծոց ի գորն»
(ՄԱՊԶ, էջ 39): «Ընթացեալ հղար զարութեամբ տրիականաւ կալեալ զականջաց առիւծուն,
հեծաւ ի վերայ առիւծուն» (ՄԱՊ, էջ 35):

ՆՀԲ-ն (հ. 1, էջ 666), ԱԲ-ն (էջ 265), Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 302) նշում են, որ
Լեւոնդի ղադը հոլովվում է արտաքին թեքման ի պարզ կամ ի-ա խառն հոլովմամբ: Հր. Աճառ-
յանը (Արմ., հ. 2, էջ 34) այս բառի համար ընդունում է վերը բերված հոլովումները, բայց թե՛
արտաքին թեքման ի պարզ, թե՛ ի-ա խառն հոլովման համար նշում է հետևաբար, սակայն Դա-
վիթ Անշաղթի լեզվում գտնում ենք՝ թեքված ի հոլովվող՝ «Դարձեալ Երաժշտին զուրախականն
բախեալ զետազս» (ԴԱՍԻ, էջ 134):

Հր. Աճառյանը (Արմ., հ. 2, էջ 205), Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 274) նշում են, որ
քուլը գոյականը հոլովվում է ու հոլովմամբ, իսկ հետևաբար՝ նաև ի հոլովմամբ: Հր. Աճառ-
յանը, սակայն, ԼԲ-ում (հ. 3, էջ 458) այս բառի դիմաց դնում է միայն ու հոլովում: Փաստերը
ցույց են տալիս (տե՛ս աղյուսակ 2), որ քուլը-ը գրաբարում գլխավորապես հոլովվում է ար-
տաքին թեքման ու հոլովմամբ՝ «նոյնպէս և զառաքելական թղթոցն, և զհին կտակարանս ամե-
նիւսիս ուրանալ» (ԵԿԵԱ, էջ 253): «Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի»
(ՍԵԲ, էջ 121): «Շրջաբերական թղթովք նզովեաց զամենայն հերձուածողս» (ՀԴՊԶ, էջ 62):
Սրանով հանդերձ, եթե նկատի չառնենք անգամ եզակի ներգոյականի իմաստի արտահայտման
համար ի-եզակի տրական խոլով կաղապարը, որը զգալիորեն հաճախ է հանդիպում, Բուղան-
դի լեզվում ունենք քուլը բառը արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ թեքվելու օրինակ՝
«Յարուցեալ փութանակի զնաց զհետ կոշեկեացն թղթին» (ՓԲՊԶ, էջ 83): Ի հոլովվող թեքված
ձևերը հետագայում կիրառական մեծ հաճախականություն են ստանում: Լեզվի պատմական դար-
գացման ուղին (ինչպես այլ հոլովումների պատկանող մի շարք բառերի դեպքում էլ), վերջ ի
վերջո, հանգեցնում է ի հոլովման հաղթանակին: Այդպիսի ընդհանրացման հետքերն արդեն

բացառական հոլովը ներառյալ առանձին հաշվել, իսկ եզակի գործիականից սկսած և հոգնակի
թեք հոլովաձևերը՝ առանձին: Նույն կերպ պետք է վարվել նաև այն բառերի դեպքում, որոնք
հոլովվում են և՛ ու, և՛ ո-ա հոլովումներով:

9 Ինչպես այստեղ, այնպես էլ այն դեպքերում, երբ շրառարանագրված կամ հետազոտող-
ների կողմից շարձանագրված փաստերը քննակով շատ չեն, թերևս հիմք տան ենթադրելու, որ
դրանք գուցե ուշ շրջանների գրիչների միջամտությամբ արդյունք են: Գուցե: Սակայն քանի որ
առայոս՝ երեկ կարելի է միայն ենթադրել, կասկածել բերում ենք և նշում նաև այդպիսի փաս-
տերը:

նկատելի են XII—XIV դդ. գրաբար մատենագրության մեջ՝ «Ամենայն գլուխը պատգամաց ըզրիս ամբաստանութիւն էր գմեծէ հայրապետին» (ՀԳՊԶ, էջ 149)։ «Ամենայն դիտաւորութիւն ըզրիս գմեղաց իմն ականարկէր գրասրանս սոցա» (ն. տ., էջ 150)։ «Իալ ըզրիս Աբգարու առ Տէր» (ՀԱԺ, էջ 3)։

Աղյուսակ 2

Աղբյուրներ	Թղթոյ	(դ)Թղթոց	Թղթի	Ի Թղթի
Աստվածաշունչ	5			1
Եղնիկ Կողբացի		1		6
Ազաթանդեղոս	3			4
Փավստոս Բուզանդ			1	1
Մովսէս Խորենացի	6	2		
Կորյուն		1		1
Ղազար Փարպեցի «Պատմութ. հ.»				1
«Թուղթ...»	2			1
Սեբեոս	1			
Ղևոնդ	1			2
Հովհաննէս Գրասխանակերտցի			1	
Մխիթար Անեցի	2	1		1

Հր. Աճառյանը (ԼԹ, հ. 3, էջ 403) գրում է. «Իսկ վերջացած օտար տեղանունները, որոնք Մեսրոպյան հայերենում հոլովվում են՝ -իայ ձևով, ինչ. Արարիա—Արարիայ, Մակեդոնիա սեռ. Մակեդոնիայ, Լիկիայ, Կեսարիայ, Ի Կեսարիայ և այլն. այս կարգի բառերը ավելի հետո սկսեցին հոլովվել -իոյ ձևով. այսպէս՝ Կեսարիոյ, Մակեդոնիոյ, Լիկիոյ, Արարիոյ, որոնց համեմատ սրբագրվեցին նաև մեսրոպյան շրջանի -իայ ձևերը»։

Գ. Զահուկյանը նշում է. «Իսկ-ով վերջացող աշխարհագրական հատուկ անուններն ու շրջանում սեռական-տրական-բացառականում ունենում են և -իոյ-ով ձևեր» (նշվ. աշխ., էջ 97)։ Իսկ Ա. Արրաճամյանը գրում է. «Իսկ-ով վերջավորվող հատուկ անունները հանդիպում են նաև ու հոլովվելով՝ Եղեւսիա—Եղեւսիոյ, Զմիւռնիա—Զմիւռնիոյ, Նիկիա—Նիկիոյ։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ սա մեր լեզվում համեմատաբար ուշ շրջանի երևույթ է»¹⁰։

Փաստերի զննումը ցույց է տալիս, որ -իա-ով վերջացող օտար տեղանունները V դարի գրաբարում մեծ մասամբ հոլովվում են -իայ ձևով, ոսկայն դա միակ բացարձակ ձևը չէ ինչպես մեսրոպյան անվանված, այնպես էլ ողջ V դարի գրաբարի համար։ Օրինակ, Մովսէս Խորենացին Նիկիա գոյականի եղակի բացառական հոլովը գործածել է ի Նիկիոյ ձևով, իսկ Բուզանդի բառը միշտ թեքել է ո հոլովվելով (3 անգամ)՝ «Դարձ Արիստակեայ ի Նիկիոյ» (ՀԳՊԶ, էջ 100, 240)։ Ի Բուզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, և եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց» (ն. տ., էջ 279)։ «Մեծն Թէոդոս ել ի Բիւզանդիոյ ի Հոռով կոյս» (ն. տ., էջ 306)։ «Մէք փութապէս դիմեալք ի Բուզանդիոյ, յուսալաք հարսանեաց պարել» (ն. տ., էջ 361)։

Ուրեմն, վերահիշյալ խմբի մեջ մտնող բառերի՝ -իոյ-ով հոլովված ձևերը զուտ ետդասական գրաբարի ծնունդ չեն, թեև V դարից հետո այդպիսի բառերը համեմատաբար ավելի հաշտի գործածվում են արտաքին թեքման ո հոլովմամբ։ Օրինակ, XII—XIV դդ. գրաբար մատենագրության լեզվում -իա-ով վերջավորվող տեղանուններն աչքի ընկնող հաճախականությամբ հոլովվում են արտաքին թեքման ո հոլովմամբ՝ «Յայնմհետէ տիրեաց ամենայն Կիլիկիոյ» (ՊԱՌ, էջ 102)։ «Խոսքով շահ սուլտանն Իլիկիոյ որդին հլիճ ասլանին էառ զԲերդուսն ի Հայոց» (ՀԳՊԶ, էջ 81)։ «Յայսմ ամի Քաջբաուս սուլտանն յԻլիկիոյ պաշարեաց զբերդ Կապանն» (ՀԳՊԶ, էջ 63)։ «Սա պատերազմեալ ընդ Տաճիկսն, վարեաց զնոսա յԻտալիոյ» (ն. տ., էջ 53)։

Ուշագրավ է, որ նույնիսկ V դարի գրաբարում -իա-ով վերջացող ծագումով օտար անձնանունների վրա թեքման -իայ ձևը համարյա չի տարածվում։ Այդպիսի անձնանունները հոլովվում են գերազանցապես արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ. օրինակ՝ «Եվ վասն ար-

¹⁰ Ա. Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևերարկ. Երևան, 1976, էջ 27։

տառացն նդեկիայի արքայի՝ յաւելու նմա հնգետասան ամ» (ԵԿԵԱ, էջ 154): «Ձոր անգան-
զաղ արծակեաց մանուկն Վասակ Սինեաց տէր ի Նեոն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ»
(ՄԽՊԶ, էջ 329): «Երանելոյն երեւիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ» (ԿՎՄ, էջ 70):

Նկատենք նաև, որ իսկ վերջացող հատուկ անունները V դարի մատենագրութեան լեզվում
հանդիպում են նաև՝ թերթած արտաքին թերթման ու հոլովմամբ: Այսպես, Ազաթանգեղոսի լեզվում
Կեսարիս ըստ գործածվել է 4 անգամ, որից 3-ը հոլովվել է Կեսարու ձևով՝ «Կացցէ անշարժ
լեկեղեցոյս Կեսարու» (ԱՊԶ, էջ 431), «Ղեռնդոս արքեպիսկոպոս Կեսարու... առցուր ող-
ջոյն» (ն. տ., էջ 412):

Այս բառը չէ՛ծ մասամբ ու հոլովմամբ են թերթել նաև Փափստոս Բուզանդը, Մովսէս Խո-
րենացին. օրինակ՝ «Վասն սրբոյն Բարսեղի ասկին ժողովուրդքն Կեսարու» (ՓԲՊԶ, էջ 84):
«Եղիտ զոմն... որում անուն Սահակ կոչէր... գոր կուցոյց փոխանակ ներսիս առանց մեծի
արքեպիսկոպոսին Կեսարու» (ՄԽՊԶ, էջ 306):

Մովսէս Խորենացին Երևնիա տեղանունը նույնպես գործածել է ու հոլովելով՝ «Եւ ժողովեալ
սուրբ Դարբն ի Թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռոմայ... Անիւիւրքսիոս
Երևնիո» (ՄԽՊԶ, էջ 298):

Շ. Որոշ բառերի համար նորագոյն կամ չնորոգեցողով ճիշտագործող կամ ճիշտում-
նէր. — ՆԶԲ-ն, ԱԲ-ն, ԱՐմ.-ը և հետազոտողները մի շարք բառերի համար չեն նշում հոլովա-
կան այս կամ այն տիպը, հոլովածներ, բայց տվյալ բառն այդ հոլովմամբ կամ հոլովածեղ թեր-
թել է և՛ V դարում, և՛ ընդհանրապես ետդասական գրաբարում: Այսպես, ՆԶԲ-ն (հ. 2, էջ 195),
Հր. Անառայնը (ԱՐմ., հ. 3, էջ 233) մահ բառի հոգնակի ուղղականի համար նշում են միայն
մահումնէ, իսկ ԱԲ-ն (էջ 535) և Գ. Ջահուկյանը (նշվ աշխ., էջ 313) դնում են մահումն և
մահումնէ: Բառարանները և ուսումնասիրողները չեն նշում մահի տարբերակը, որը թե՛ դա-
սական, թե՛ ետդասական գրաբարում ամենից շատ գործածվողն է (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Աղբյուրներ	մահումն	մահումն(ս)	մահ(ս)
Աստվածաշունչ		1	
Եզնիկ Կողբացի	1		6
Ազաթանգեղոս			1
Եղիշե			1
Փափստոս Բուզանդ			1
Մովսէս Խորենացի			1
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»		1	1
Սերբոս			1

Համեմատութեան համար մեր կողմից վերցված 16 աղբյուրներից մեզ հետաքրքրող հոլո-
վածները (կամ նրանցից որեւէ մեկը) հանդիպում են միայն 8-ում: Ըստ որում՝ մահումնէ-ը՝ 1
անգամ, մահումն-ը՝ 212, իսկ մահի-ը (որից նաև հոգնակի հայցականի (զ)մահս-ը)՝ 12 ան-
գամ՝ «Առին մահի տարածմամբ» (ԵԿԵԱ, էջ 79): «Փառաւորեալ են մահի» (ԱՊԶ, էջ 55):
«Կեանք իրեանց ի մահ համարեալ էին, և մահի իրեանց անշուշ կեանք» (ԵԿՎԶ, էջ 68):
«Թէպէտ շատ զանձս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահացս եհաս ինձ մեռանել»
(ՓԲՊԶ, էջ 217): «Թող զի փոքր մի հանգեայց և ոչ իսկ տեսից զմահս ձեր» (ՍԵՊ, էջ 53):

11 ՆԶԲ-ն (հ. 2, էջ 195) մահումն հոգնակի ուղղականի համար Խորենացուց բերել է հե-
տեւյալ նախադասութիւնը՝ «Շուրջ զգերեզմանան լինէին կամաւոր մահումն»: Այս նույն նա-
խադասութիւնը Խորենացու «Պատմութիւն հայոց» երկի 1913 թ. հրատարակութեան մեջ (Տրի-
դիս) ունի մահումն տարբերակը՝ «Եւ շուրջ զգերեզմանան լինէին կամաւոր մահումն»
(էջ 191):

12 Ավելի ճիշտ՝ Աստվածաշունչում և Ղազար Փարպեցու լեզվում 1-ական անգամ հանդի-
պում է հոգնակի հայցականի մահումն հոլովածը, որից միայն հանում ենք հոգնակի ուղղակա-
նի մահումն-ը՝ «Ոչ արար մեծամեծ վնասս և մահումն» (ՂՓՊԶ, էջ 116): «Գործեաց մահումն
անհամարս» (Ա. Մակ., Ա, 6):

12 «Հանդես», N 1

Ուրեմն, ման գոյականի հոգնակի ուղղականի համար առաջին հերթին նշելու էինք մահի-ը:

Առանձնապես պետք է ընդգծել XII—XVI դդ. գրաբար մատենագրության մեջ գործածված մի շարք բառերի համար նորագյուտ կամ չբառարանագրված հոլովումների (հաճախ նաև՝ հոլովաձևերի) առատության փուտը: Այդպիսի տվյալների հանդիպում ենք թե՛ անվանական, թե՛ դերանվանական հոլովման մեջ: Անվանականի մեջ դրանք զգալիորեն շատ են և, առավել կամ ավել չափով, վերաբերում են անվանական հոլովման բոլոր տիպերին՝ ա, և, ի, ո, ու պարզ, ի-ա, ո-ա խառն, ինչպես նաև մեկից ավելի հոլովումներով թեթև թանրերին: Մյուս կողմից՝ դրանք հանդիպում են թե՛ V դարի, թե՛ ընդհանրապես ետդասական գրաբարում, իսկ դերանվանական հոլովման մեջ այդպիսի փաստերն անհամեմատ ասկավ են և չեն հանդիպում մեր ձեռքի տակ եղած ինչպես V, այնպես էլ VI—IX դդ. գրաբարում: Ահա մի քանի օրինակներ¹³ անվանական հոլովման համար՝

ա) Նևո—Նևոի, բայց՝ Նևոյ «Սա թագաւորեալ ամս և, մեռանի ի դիպանէ Նևոյ որոսոյ» (ՄԱՊ, էջ 29):

բ) Կովկաս—Կովկասու, բայց՝ Կովկասի «Տիրեալ աղայոց ու աղանց սորին ի դրանց Հոնաց և Կովկասին» (ՍՈՈԿ, էջ 30):

գ) Վրանապահ—Վրանապահի՝ Վրանապահաց, բայց՝ Վրանապահու՝ «Փոխեաց զնա Ռոմանոս և տայ զՌոման Ապուրոսպայ վրանապահուն Դաթի Կուրապաղտին» (ՄՈԻԺ, էջ 64):

դ) Ջուր—ջուր, բայց՝ ջրի՝ «Այժմ հս սեղեխ օտարոտին նման հոսեալ ջրին» (ՍՈՈԿ, էջ 28):

Յ. Մեկից ավելի հոլովումներով, հոլովական հարացույցի մեկ կամ մեկից ավելի անդամների համար հոլովական զուգածե տարբերակներ ունեցող բառեր: Ընդհանրապես գրաբար մատենագրության մեջ հատկապես անվանական հոլովման պատկանող այդպիսի բաղաձայնի բառեր կան: Այս երևույթն արտաբնական ինչ-որ հանգամանքի հետևանք չէ, այլ մեր լեզվի պատմական զարգացման, կենդանի, խոսակցական լեզվին բնորոշ մի շարք կողմերի արդյունք:

Մատենագրության լեզվի այս վիճակի արտացոլումն ենք գտնում ՆՁԲ-ում, ԱԲ-ում, զանազան հետազոտողների աշխատություններում (Իհարկե, առանձին աոթներով) կամ աշխատություններին (հիմնականում՝ գրաբարի ձեռնարկներում, դասագրքերում) կցված բառացանկերում, գրաբարի այլ բառարաններում: Դրանց մեջ լուրաքանչիւր գլխաբառի դիմաց արձանագրված են նրա թերման գրեթե բոլոր տարբերակները կամ նշված են առանձին անհրաժեշտ հոլովաձևերը, որոնց մեջ, անշուշտ, կան այնպիսիները, որոնք V դարից հետո են առաջացել: Այդ բառարանները, սակայն, միևնույն բառի դիմաց նշված հոլովական զուգածները ժամանակագրական հաջորդականությամբ չեն բերում: Հետևաբար, հայոց լեզվի պատմության համար շահագրգիռ անհրաժեշտ է պարզել, թե մեկից ավելի հոլովումներով թեթև թանրեր լեզվի պատմական զարգացման ո՞ր շրջանում, ո՞ր հոլովումով են հոլովվել կամ տվյալ բառի հոլովման տարբերակներից ո՞րը մոտավորապես ե՞րբ է կիրառական առավել մեծ հաճախականությամբ գործածվում, ո՞րն է հինը, ո՞րը՝ նորը, նորագույնը և այլն: Այս հանգամանքների հաշվառումն ու հետազոտումը անհրաժեշտ է մի շարք կողմերով՝ ա) հոլովումների կամ հոլովաձևերի ժամանակաշրջանների պարզման, նրանց կիրառական հաճախականության ուսումնասիրման, բ) տարբեր ժամանակներում, տարբեր հետազոտողների կողմից արտահայտված կարծիքների ճշգրտման համար և այլն: Այդպիսի աշխատություն, սակայն, հնարավոր է գրել միայն այն դեպքում, երբ հրատարակված կլինեն մեր բաղաձայնյան գրաբար մատենագրության տարբեր կողմերին վերաբերող բաղաձայնի գործերի անթերի բնագրային համաբարբառի վերածել հնարավոր չէ): Սրանով հանդերձ, չի կարելի աչքաթող անել այսօրվա հնարավորությունները՝ առայժմ հրատարակված համարաբարները, առանձին հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքները, որոնք մեր պրպտումների հետ միասին, կարող են գոնե որոշ մոտավոր պատկերացում տալ խնդրո առարկա երևույթի մասին: Օրինակ, ՆՁԲ-ն (հ. 1, էջ 956), ԱԲ-ն (էջ 583), ԱԲմ.-ը (հ. 2, էջ 382), Գ. Ջուրիկյանը (նշվ. աշխ., էջ 289) իրավացիորեն բնորոշ

¹³ Նախ նշում ենք հոլովական այն ձևերը, որոնք արձանագրված են բառարաններում և հետազոտողների կողմից, ապա բերում ենք շարձանագրվածը, նորագյուտը:

նում են, որ խոզ գոյականը հոլովվում է արտաքին թեքման ի պարզ կամ ի-ա խառն հոլովմամբ՝ խոզի, խոզից կամ խոզաց:

Բնածնասիրությունը ցույց է տալիս (տե՛ս աղյուսակ 4), որ արտաքին թեքման և՛ ի պարզ, և՛ ի-ա խառն հոլովման փաստեր կան նույնիսկ V դարի գրաբարում. օրինակ՝ «Մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց» (Մատթ., է, 6): «Յորժամ ի խոզից երամակն մը-տարերեցին մտանել, ոչ կարագին մտանել» (Եկեմ, էջ 87):

Աղյուսակ 4

Աղբյուրներ	խոզի	(ի)խոզից	(ի)խոզաց
Աստվածաշունչ	2	5	2
Նզնիկ Կողբացի	2	2	
Աղաթանգեղոս	4	1	2
Նզիր			1
Մովսես խորենացի	1	1	
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»			1
«Թուղթ...»	1		
Ղևոնդ		2	
Գրիգոր Նարեկացի		2	
Հովհաննես Դրասխանակերտցի		1	

X—XIII դդ. գրաբար մատենագրության մեջ գերազանցապես հանդիպում են արտաքին թեքման ի հոլովմամբ օրինակներ՝ «Յանտառաբոյժ խոզից և յանցաւորաց ճանապարհի կո-խեցաք» (ՀՊՊԶ, էջ 361): «Ըզնա յերամակս խոզիցն արգել, եւ յիս ինքն զօրացաւ» (ԳնՄՈ, էջ 171): «Կերակուր լինին խոզից և կոխան զազանաց» (ՄԳԱ, էջ 55):

Ըստ ՆՁԲ-ի (հ. 2, էջ 62), ԱԲ-ի (էջ 481), Ա. Արրահամյանի (նշվ. աշխ., էջ 510)՝ հաւել գոյականը հոլովվում է արտաքին թեքման ի պարզ կամ ի-ա խառն հոլովմամբ՝ հաւելի, հաւելաւ կամ հաւելի, հաւելաց, հաւելոք:

Հր. Աճառյանը Արմ.-ում հաւել բառի հոլովման վերաբերյալ ոչ մի նշում չունի, իսկ ԼԹ-ում (հ. 3, էջ 455) այն հատկացնում է միայն ի-ա խառն հոլովման: Սակայն հաւել բառի՝ արտա-քին թեքման ի հոլովման փաստեր ունեն Հովհաննես Դրասխանակերտցին, Մխիթար Այրիվանե-ցին, ինչպես նաև XII—XIII դդ. գրաբարագետ մատենագրությունը¹⁴. օրինակ՝ «Ըստ ականայ հաւելիցն սակի հաճէր հաւանեցուցանել պարտավճար լեալ բռնադատին» (ՀՊՊԶ, էջ 325): «Սա աղբատացոց զաշխարհն անշտի հաւելի» (ՄԱՊԶ, էջ 60):

Հաւել գոյականը ընդհանրապես գրաբարում գերազանցապես հոլովվում է ի-ա խառն հո-լովմամբ (տե՛ս աղյուսակ 5)՝ «Ձի մի՛ թուիցի ընդ հաւելաւ վարել զբանաւորսն» (Եկեմ, էջ 163): «Մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հաւելոք նեղել քան զշափն» (ՓԲՊԶ, էջ 65): «Եւ սատակեցին զգարս հոռոմոց և արկին ընդ հաւելաւ իւրեանց» (ՄԱՊ, էջ 44):

Ուրդի գոյականի համար ՆՁԲ-ն (հ. 2, էջ 529), ԱԲ-ն (էջ 654), Հր. Աճառյանը (Արմ., հ. 3, էջ 576), Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 278, 283) նշում են, որ հոլովվում է արտաքին թեքման ո պարզ կամ ո-ա խառն հոլովմամբ՝ ուրդոյ՝ ուրդոց կամ ուրդեաց:

Վիճակագրությունը ցույց է տալիս (տե՛ս աղյուսակ 6), որ ուրդի բառը գրաբարում գրեթե միշտ զործածվել է արտաքին թեքման ո պարզ հոլովմամբ: Մեր կողմից համեմատության համար վերցված 17 աղբյուրներում ուրդի-ն արտաքին թեքման ո հոլովմամբ զործածվել է 1629 անգամ (սեռական, արական, բացառական, զործիական հոլովները միասին վերցրած), իսկ ո-ա հո-լովմամբ հանդիպում է միայն ուրդեաց ձևով՝ 2 անգամ՝ «Միամտութիւն առն և կնոջ առ մի-մեանս, և սէր յուրեաց վերայ» (ՂԱՄԻ, էջ 150): «Եւ յոյժ փութային վասն եղբարց և ուրդեաց» (ԵվՎՊ, էջ 43): Ահա երկու օրինակ էլ արտաքին թեքման ո պարզ հոլովման համար՝ «Սպա-նին ղըգեաշխն, եղբարբք և ուրդովք իւրովք հանդերձ» (ՓԲՊԶ, էջ 19): «Հանդերձաւ կազմեցաւ պարթեն... ընտանեօք կանամբք և ուրդովք» (ԱՊԶ, էջ 20):

¹⁴ ՆՁԲ-ն այս բառի արտաքին թեքման ի հոլովման համար օրինակ է բերում նաև V դարի քրդական գրականությունից՝ Նվսեբեսի Պատմությունից՝ «հաւելի ոսկուց և արծաթոց»: Այսպիսի փաստերը սակավ են:

Աղանդի բառի հոլովման վերաբերյալ նշված (հ. 1, էջ 33) նշում է, որ հոլովվում է արտաքին թեքման ու ի պարզ և ի-ա խառն հոլովումներով՝ աղանդոյ, աղանդոց, աղանդից, առանդաց:

Հր. Աճառյանը (Արմ., հ. 1, էջ 120), Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 272) հետևում են նշվածին, բայց միայն այն տուրբերությամբ, որ Հր. Աճառյանը աղանդ բառի արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ թերվելը համարում է հետևաբար:

Աղյուսակ 5

Աղբյուրներ	հարկաւ	հարկօք	(ի)հարկաց	հարկիւ	հարկից
Աստվածաշունչ	1	1	8		
Եղնիկ Կողբացի	1				
Փավստոս Բուզանդ		2			
Եղիշե	1				
Մովսես Խորենացի	4	1	7		
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»	1		1		
Սերևոս			1		
Ղևոնդ	1	1			
Հովհաննես Դրասխանակերտցի		7			1
Մխիթար Անեցի	1				
Մխիթար Այրիվանեցի				1	

Աղյուսակ 6

Աղբյուրներ	(զ, յ)որդւոյ	(յ, զ)որդւոց	որդեաց	որդւով	որդւովք
Աստվածաշունչ	307	779		1	14
Կորյուն	7				
Դավիթ Անհաղթ			1		
Եղնիկ Կողբացի	22	12		1	
Ազաթանգեղոս	59	21		8	2
Եղիշե	10	1	1		
Փավստոս Բուզանդ	43	19		5	2
Մովսես Խորենացի	64	46			11
Ղազար Փարպեցի «Թուղթ...»	1	1			
«Պատմ. հ.»	13	15			10
Զենոն	1				
Սերևոս	29	14		9	5
Ղևոնդ	9	29			
Գրիգոր Նարեկացի	10			1	
Մխիթար Այրիվանեցի	2	5		1	1
Մխիթար Անեցի	16	7			
Հեթում պատմիչ	10	6		1	6

ԱԲ-ն (էջ 15), Ա. Արրահամյանը (նշվ. աշխ., էջ 450), Հր. Աճառյանը (ԼՔ, հ. 3, էջ 464) աղանդ-ի հոլովման համար արտաքին թեքման ի պարզ հոլովում չեն նշում, բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աղանդ բառը հոլովվել է նաև արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ՝ «Ըստգտիչ աղանդից, բռնախոյեան դիաց» (ԳՆՄՈ, էջ 262): «Սնտի աղանդիւն իւրոյ մոլորեցոյց բազում ազգս» (ՀՊԺ, էջ 49):

Ինչ վերաբերում է V-XIV դդ. գրաբարին, կարելի է անվարան ասել, որ աղանդ զոյականը անհամեմատ շատ հոլովվել է արտաքին թեքման ու հոլովմամբ (տե՛ս աղյուսակ 7). օրինակ՝ «Անուանեալք էին զեպիսկոպոսունս աղանդոյն արիանոսաց» (ՓԲՊԶ, էջ 82): «Զի՞նչ արասցուք վասն անբնին աղանդոյն բրիստոնէից» (ԵՎՎԶՊ, էջ 180): «Սա յառաջագոյն երթեալ սովին աղանդով՝ բարոյել և ուսուցանել նոցա զստութիւնն զայն» (ՄԱՊ, էջ 46):

Աղյուսակ 7

Աղբյուրներ	(1) աղանդոյ	(2) աղանդոց	աղանդի	աղանդից	աղանդաց
Աստվածաշունչ	1				
Եղնիկ Կողբացի	1	2	1		1
Ազաթանգեղոս	2		1		
Փավստոս Բուզանդ	4		1		
Եղիշե	1		1		
Մովսես Խորենացի	5				
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»	1	1			
«Թուղթ...»			1		
Սերեոս	2	1			
Գրիգոր Նարեկացի				1	
Հովհաննես Դրասխանակերտցի	1				
Մխիթար Այրիվանեցի			1		

Ինչպես արդեն ակնարկել ենք, լուրջ ուշադրություն պետք է դարձվի նաև միևնույն հորովա-
ձևի տարբերակների կիրառական հաճախականության ուսումնասիրությանը: Մենք այստեղ
էրևանումք միայն երկու բառի հորովաձևերի տարբերակների մասին: Այսպես, բառարաններն ու
հետազոտողները հուր գոյականի գործիականի համար իրավացիորեն նշում են հուր(ք) և
հուրվ(ք): Մեր աղբյուրների վիճակագրությունը ցույց է տալիս (տե՛ս աղյուսակ 8), որ թեև

Աղյուսակ 8

Աղբյուրներ	հուրվ(ք)	հուրք(ք)
Աստվածաշունչ	119	4
Եղնիկ Կողբացի	1	
Դավիթ Անհաղթ	2	
Ազաթանգեղոս	9	2
Եղիշե	2	
Փավստոս Բուզանդ	3	
Մովսես Խորենացի	1	
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»	1	
Սերեոս	5	3
Ղևոնդ	4	
Հովհաննես Դրասխանակերտցի	7	
Գրիգոր Նարեկացի	1	4
Մխիթար Այրիվանեցի	1	

հուր տարբերակը գործածվում է ընդհանրապես գրաբարում, սակայն հուրվ գոյաձևի կիրա-
ռական հաճախականության համեմատությամբ այն խիստ սակավ է հանդիպում: Բավական է
ասել, որ Աստվածաշունչում 119 հուրվ(ք)-ի դիմաց հանդիպում է ընդամենը 4 հուրք(ք): Բեր-
ված 13 աղբյուրներում հուրվ(ք)-ը գործածվել է 154 անգամ, իսկ հուրք(ք)-ը՝ 13 անգամ:
Կասկած չի կարող հարուցել այն, որ հենց հուրվ(ք) տարբերակն էլ հատուկ է եղել կենդանի
լեզվին, որը հարատևել է մինչև մեր օրերը, դարձել արդի գրական հայերենի գործիականի միակ
ձևը: Ահա մեկական օրինակ հուրք և հուրվ տարբերակների համար՝ «Ընդ խաղացեալսն հուրք...
վանեցին զանձարմինքն Բելիար» (ԳՆՄՈ, էջ 206): «Երկու անգամ անցանելոց է աշխարհ վասն
մեղաց» ջրով և հուրվ» (ՄԱՊԶ, էջ 26):

Այսպես էլ, բառարանները և հետազոտողները նշում են, որ ջուր գոյականը հորովվում է
արտաքին թեքման ու հորովմամբ, իսկ գործիական հուրվը լինում է ջուրք(ք), ջրով(ք), հոգնա-
կի սեռական-տրական՝ ջրոյ կամ ջուրց, հոգնակի բացառական էլ՝ ի ջուրց կամ ի ջրոց:

Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 279) ջուր բառի գործիականի համար տալիս է միայն ջուրք
տարբերակը:

Վիճակագրությունը ցույց է տալիս (տե՛ս աղյուսակ 9), որ և՛ ջուրը (ք), և՛ ջրով (բ) տար-
բերակները գործածվում են ինչպես V դարի, այնպես էլ ողջ Լեդասական զրաբարում: Սակայն
ջուրը (ք) տարբերակը խիստ սակավ է գործածվում: Մեր 14 աղբյուրներում այն հանդիպում է
Աղյուսակ 9

Աղբյուրներ	Ջրով	Ջրովք	Ջուրը	Ջուրք	(Ի) Ջրոց	(Ի) Ջուրց
Աստվածաշունչ	56	1	3	1	46	71
Եղնիկ Կողբացի	1				2	10
Դավիթ Անհաղթ						1
Ազաթանգեղոս	4		1	1		26
Եղիշե						1
Փավստոս Բուզանդ	1					4
Մովսես Խորենացի	1				2	8
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»	2	1			6	1
Ջենոն		1			1	
Սերևոս	4					1
Ղևոնդ						3
Գրիգոր Նարեկացի	3		3	1		5
Մխիթար Այրիվանցի	1				3	
Մապ						1

ընդամենը 10 անգամ, մինչդեռ ջրով (ք)-ը՝ 76 անգամ (7, 6 անգամ ավելի շատ)՝ «Զկառակերտն-
ջուրը լուանալ» (Գ. Մակ., Ե, 23): «Ոչ ողորիլ ջուրք, ոչ այրիլ հուրք» (ԳնՄՈ, էջ 266): «Եթե
զսերմն աղացեալ ջրով բմպիցէ որ, ի ցանկութենէ արկանէ» (ԿԿԵԱ, էջ 67): «Անցանելոց է
աշխարհ»՝ ջրով և հրով, թէ ջրով անցանէ պղինձն մնայ» (ԱՍՏ, էջ 118):

Ջուրց և ջրոց տարբերակներից սպասելի էր, որ ավելի կենսունակ ու տարածված լիներ
(ի) ջրոց-ը, որովհետեւ ջուր գոյականը հոլովվում է արտաքին թեքման ու հոլովմամբ: Փաստերը,
նույնպես, հիշտ հակառակն են ցույց տալիս: Թե՛ դասական, թե՛ ընդհանրապես ետդասական
զրաբարում մեծ հաճախականությամբ հանդիպում է (ի)ջուրց-ը: Այն մեր նույն 14 աղբյուր-
ներում գործածվել է 132 անգամ, իսկ (ի) ջրոց-ը՝ 60 անգամ (2,2 անգամ ավելի շատ)՝ «Եւ
երկիր առանց ջուրց պատառի» (ԵԿԵԱ, էջ 10): «Երկիր ի վերայ ջրոց է» (Ն. տ., էջ 197):
«Ջրոց առաւելուն անօգուտ և նուաղելի անհնարաւոր» (ՄԽՊԶ, էջ 365):

Ճ. Բառեք, որոնց հոլովման տիպի վերաբերյալ գրաբարի բառաբանների կամ հետազո-
տողների կողմից արտահայտվել են տարբեր, հաճախ իրարամերձ կարծիքներ:—Այսպիսի բա-
ռերի թիվը բավական մեծ է (մի քանիսին արդեն ծանոթացանք): Այստեղ բավականանք
միայն երկու օրինակի ցուցադրմամբ: Այսպես, ՆՃԲ-ն (հ. 1, էջ 113), ԱԲ-ն (էջ 43), Ա. Աբ-
րահամյանը (նշվ. աշխ., էջ 453) նշում են, որ անարգ բառը հոլովվում է արտաքին թեքման ի
պարզ կամ ի-ն խառն հոլովմամբ:

Հր. Աճառյանը կՔ-ում (հ. 3, էջ 451) մատնանշում է միայն ի-ա խառն հոլովում, իսկ
Արմ.-ում անարգ-ի հոլովման տիպի վերաբերյալ որեւէ ցուցում չունի:

Մեր աղբյուրներում անարգ ածականը անարգի ձևով հանդիպում է Աստվածաշունչում (1 ան-
գամ), ինչպես նաև XII—XIII դդ. զրաբարում՝ «Հուսկ յետոյ քան զամենեսին իբրև անարգի
միող երեսեցաւ և ինձ» (Ա. Կորնթ., ԺԵ, 8): «Յանդիման կացուցանէ առակս, թէ ոչ որ կարէ
ճոխանալ առանց անփառից և ոչ բարձրանալ առանց անարգից» (ՄԳԱ, էջ 48):

Ի-ա խառն հոլովմամբ փաստեր գտնում ենք թե՛ դասական, թե՛ վաղ ետդասական զրա-
բարում՝ «Կարի յանարգաց որ իցէ» (ԱՊԶ, էջ 20): «Բանտին, իբրև զայր մի յանարգանաց»
(ՂՎՊ, էջ 134—135):

Ըստ ՆՃԲ-ի (հ. 2, էջ 200) ման գոյականը հոլովվում է արտաքին թեքման ու ի պարզ և
ի-ա խառն հոլովումներով:

ԱԲ-ն (էջ 537) ի-ա խառն հոլովում չի նշում, այլ միայն՝ ու, ի պարզ հոլովումներ՝ մանու,
մանի:

Հր. Աճառյանը (Արմ., հ. 3, էջ 241) հետևում է ՆՃԲ-ին, բայց հիմնական է համարում ա
հոլովումը՝ փակադծի մեջ գրելով՝ «նաև՝ ի հլ. գրթ. մանիւ... յետնաբար կա ի-ա հլ.»։ Սա-

կայն լժ-ում (հ. 3, էջ 460) Հր. Անառայնը նշում է միայն արտաքին թեքման ու պարզ հոլովում:

Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 277) ու հոլովումը չի նշում, այլ միայն՝ արտաքին թեքման ի պարզ, իսկ հետնաբար՝ ի-ա խառն հոլովում:

Մեր աղբյուրներում մահ-ը հոլովված ձևով հանդիպում է Աստվածաշնչում (3 անգամ ու միշտ ու հոլովմամբ) և Գ. Նարեկացու լեզվում (1 անգամ և հնարավոր չէ ասել՝ ի՞նչ հոլովմամբ է թեքվել, թե՞ ի-ա խառն)՝ «Եհար... մանով արօրոյ» (Դատ. Դ, 31): «Զի՞նչ իմաստնասցի՜ որ ունիցի զմանոյ» (Սիրաբ, իր, 36): «Ոչ ոք արկանէ ձեռն զմանով» (Ղուկ. Թ, 62): «Եւ ձեռն ի մանի գործոյն՝ ըզյետնոցն հետազօտեալ» (ԳնՈՐ, էջ 53):

XIII դարի գրաբարում այս բառը գտնում ենք՝ թեքված ի հոլովիչով՝ «Որ սպան իղշտացոցն զհարիւր այր մանիւն» (ՄԱՊԶ, էջ 35):

Նկատելի է, որ հետազոտողներն այս կամ այն բառի հոլովումը նշելիս հաճախ հետևում են իրենց տրամադրության տակ եղած մի քանի բառարաններից մեկին, մինչդեռ, իրական փաստերի հետ հաշվի նստելու դեպքում, պետք է հետևելին մի այլ բառարանի: Օրինակ, ՆՀԲ-ն (հ. 2, էջ 563) չառ բառի համար նշում է ի-ա խառն հոլովում: ԱԲ-ն (էջ 666) նույնպես արձանագրում է ի-ա խառն հոլովում՝ «Իշտ կերպով ավելացնելով նաև ու հոլովում: Իհարկե, վերջինս կիրառական սակավ հաճախականություն ունի (տե՛ս աղյուսակ 10). օրինակ՝ «Առ ի նմանէ շառոյ իւրում» (Ժողով., Ե, 12): «Ոչ ինչ իմացաւ Դղակ թէ այն մեծութիւն հանդերձոյն շառոյ նորա իցէ այն» (ՓԲՊԶ, էջ 171):

Հր. Անառայնը (Արմ., հ. 3, էջ 624, իթ, հ. 3, էջ 456), Գ. Զահուկյանը (նշվ. աշխ., էջ 295) հետևելով ՆՀԲ-ին՝ չառ բառի համար արձանագրում են միայն ի-ա խառն հոլովում:

Աղյուսակ 10

Աղբյուրներ	չարի	(ի) չարաց	չարոյ	չարով	չարաւ
Աստվածաշունչ	34	26	1		2
Կորնթոն		1			
Դավիթ Անհաղթ	1				
Եզնիկ Կողբացի	31	2			
Ագաթանգեղոս	5	5			
Եղիշե	5	1			
Փավստոս Բուղանդ	3		1		
Մովսէս Խորենացի	1				
Ղազար Փարպեցի «Պատմ. հ.»	6	2			
Զենոն	5				
Սեբեոս	1				
Ղևոնդ	1	1			
Գրիգոր Նարեկացի	28	6			
Մխիթար Այրիվանեցի	1				

Գրաբարի հոլովման ուսումնասիրման ուղղությամբ հալ լեզվաբանության նվաճումները հաշվի առնելով հանդերձ, պետք է ասել, որ լեզվաբանական-մասնագիտական դրականության մեջ գրաբարի մի շարք բառերի հոլովման կապակցությամբ անհրաժեշտ է որոշ ճշգրտումներ կատարել:

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱԲ—«Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Վենետիկ, 1865:

Ա. Կորնթ.—Առ Կորնթացիս Ա (տե՛ս «Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր կտակարանաց», Վենետիկ, 1860: Աստվածաշնչի գրքերի դիմաց այսուհետև փակագծի մեջ կնշենք՝ Գիրք...):

Ա. Մակ.—Մակաբայեցոց Ա (Գիրք...):

Ա. Մնաց.—Մնացորդաց Ա (Գիրք...):

ԱՊԶ—«Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Տփղիս, 1909:

ԱՍՏ—Անանուն Սեբաստացու տարեգրութիւնը (տե՛ս Վ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Մանր ժամա-

նակագրություններ, 13—18-րդ դդ., հ. 2, Երևան, 1956: Այս աղբյուրը, ինչպես նաև նրա առաջին հատորը աշտուհեան կնշենք՝ (ՄԺ):

Արմ.—Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1—4, Երևան, 1971—1979:

Բ. Թադ.—Թագադրութեանց Բ (Գիրք....):

Գ. Մակ.—Մակարայեցոց Գ (Գիրք....):

ԳնՄԲ.—Գրիգոր Նարեկացի. Մատենանոց հրատարակության Պուշկին Այրես. 1948:

ԿԱՍԻ.—Կալիթ Անյաղթ, Սահմանը իմաստաստության. Երևան, 1960:

Դատ.—Դատադրք (Գիրք....):

ԵկեԱ.—Եղնկայ Կողբացոյ Բաղրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

ԵՎՎՊ.—Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Ժողով.—Ժողովող (Գիրք....):

ԼԲ.—Հ. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957:

ԿՎՄ.—Կորիւն. Վարք Մաշտոցի. Երևան, 1941:

ՀԱԺ.—Հովհաննես Ավագերեցի ժամանակագրությունը (ՄԺ):

ՀԴՊՀ.—«Յովհաննես կաթողիկոսի Իրաւիանակերտեցոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912:

ՀՊԺ.—Հեթում պատմիչի ժամանակագրությունը (ՄԺ):

ՀՊԹ.—Հեթում պատմիչ. Պատմութիւն Բաթուրաց. Վենետիկ, 1842:

ՂՎՊ.—«Ղևոնդեայ Վարդապետի Պատմութիւն». Ս. Պետերբուրգ, 1887:

ՂՓՊՀ.—«Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց». Տիֆլիս, 1904:

ՄԱՊ.—«Մխիթարայ Անեցոյ Պատմութիւն». Ս. Պետերբուրգ, 1879:

ՄԱՊՀ.—«Մխիթարայ Այրիփանեցոյ Պատմութիւն հայոց». Մոսկովա, 1860:

ՄԳԱ.—Մխիթար Գոշ. Առակներ. Երևան, 1951:

ՄԽՊՀ.—«Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց». Տիֆլիս, 1913:

ՄՈՒԺ.—Մատթէոս Բուհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898:

ՆՀԲ.—Նոր բողոքի հայկազնեան լեզուի» (հ. 1—2). Վենետիկ, 1836—1837:

Ն. տ.—Նույն տեղում:

ՊԱԻ.—«Պատմութիւն աղբիւր Ոսկրիանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» (ՄԺ):

ՍԵՊ.—«Սեբեդոսի եպիսկոպոսի պատմութիւն». Երևան, 1939:

ՍՈՈԿ.—«Ստեփաննոս Օրաւլեանի Ողբիւ. կաթողիկէն. Թիֆլիս, 1885:

ՓԲՊՀ.—«Փաւստոսի Բուղանդացոյ Պատմութիւն հայոց». Ս. Պետերբուրգ, 1883:

ЗАМЕЧАНИЯ О СКЛОНЕНИИ НЕКОТОРЫХ СЛОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Գ. Կ. ԲԱԳԴԻՇՅԱՆ

Резюме

Для более точного и всестороннего описания системы склонения древнеармянского языка (грабара) и выявления путей его развития (с учетом достижений армянского языкознания в указанной области) предлагается следующая периодизация истории древнеармянского языка: 1) период классического грабара (V в.); 2) постклассический грабар (VI—XIX вв.) с подпериодами: а) ранний грабар (VI—VIII вв.); б) грабар предсреднеармянского литературного языка (IX—XI вв.); в) грабар периода среднеармянского литературного языка (XII—XVI вв.); г) грабар периода новоармянского языка — ашхарабара (XVII—XIX вв.). На этой основе мы показываем, что, во-первых, имеются многочисленные слова, склонение которых исследователи несправедливо приписывают постклассическому грабару, между тем такой тип склонения встречается и в грабаре V века; во-вторых, для многих слов указываются новые формы склонения, которые до настоящего времени в словарях древнеармянского языка не зафиксированы. Одновременно в статье отмечается, что для разносклоняемых слов грабара или же слов, имеющих несколько форм одного и того же падежа, необходимо определить временной отрезок, в течение которого по преимуществу реализовался тот или иной вариант, а также частоту употребления каждого варианта.